

«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՌԻԴԻՏ»

ՍԱՀՄԱՆԱՓՈԱԿ

ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«ECONOMICS-AUDIT»

LIMITED LIABILITY

COMPANY

Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085 Տրված 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից. 378240, ք. Երևան, Կորյունի 7/1, 9 et. Erevan, st. Koryun – 7/1, 9

Հեռ. /Tel/Բջջ. /094-40-99-80, /010/ 54-09-08

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԱՎՈ Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ-ի

2012 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Հասցեատերը՝ «ԱՎՈ Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ-ի մասնակիցներին

Մեր կողմից իրականացվել է «ԱՎՈ Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ-ի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները բաղկացած հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է

խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Մեր կարծիքի ձևափոխման համար հիմք է հանդիսացել այն, Մենք չենք մասնակցել ընկերության ակտիվների և պարտավորությունների տարեկան գույքագրման աշխատանքներին և տարվա ընթացքում չենք կարողացել հետևել դրանց շարժին: Միաժամանակ Մենք ձեռք չենք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ 2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքի վերաբերյալ քանի որ չենք կարողացել ստանալ համապատասխան հաստատումներ մատակարարներից : Այդ պատճառով չենք կարողացել արժանահավատորեն չափել հնարավոր անճշտությունների ծավալները, եթե կլինեն այդպիսիք ու որոշել այդ անճշտությունների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ Կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության , կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱՎՈ Ֆ.Մ.Հ» ՍՊԸ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի՝ ճշմարիտ և իրական պատկերը, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՈՒԴԻՏՈՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

01.07.2013թ.



A handwritten signature in blue ink, appearing to be "K. Sahakyan", written over the printed name of the auditor.